ՀՀ ներքին գործերի նախարարության
Ֆինանսաբյուջետային վարչության պետ՝
Վարդան Պետրոսյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ներքին գործերի նախարարության Ֆինանսաբյուջետային վարչության փորձագետ Գայանե Գևորգի Սահակյանի կողմից 2024թվականի 4 -րդ եռամսյակում կատարված աշխատանքների վերաբերյալ

2024 թվականի 4-րդ եռամսյակի ընթացքում իմ կողմից ՀՀ Շիրակի մարզի Գյումրի քաղաքի Ա.Շիրակացի 17 աշխատավայրում կատարվելեն հետևյալ աշխատանքները.

1. Կազմել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Մուշի բաժնի պահպանման ծախսերի և սոցիալական փաթեթի գծով նախատեսված ծախսերի 2024 թվականի եռամսյակային նախահաշիվները, ներկայացրել հաստատման ՀՀ ՆԳՆ ոստիկանության ֆինանսաբյուջետային վարչություն:
2. Ընդունել եմ ՀՀ ՆԳՆ ոստիկանության ՀՈԳՎ Մուշի բաժնի աշխատողների ամսեկան աշխատաժամանակի հաշվարկի տեղեկագրերը, կատարել եմ կազմհաստիքային փոփոխությունների կապակցությամբ փոփոխությունները, հաշվարկվել է աշխատավարձերի, պարգևատրումների, ներքին գործուղումների, քաղաքում պաշտոնական փոխադրումների փոխհատուցումների, ծառայության վայրում ծառայողական բնակարանով չապահովելու դեպքում դրամական հատուցման, չօգտագործված արձակուրդի հաշվարկները, արձակուրդային վճարների հաշվարկներ, կազմել հաշվարկի թերթիկներ, կազմել բացատրություններ, վճարման ցուցակներ և հաշվարկա-վճարային տեղեկագրեր:
3. Կատարված հաշվարկների հիման վրա կազմել եմ բյուջետային ֆինանսավորման հայտ – պահանջագրեր, ներկայացրել ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչություն:
4. Գանձապետական վճարահաշվարկային էլեկտրոնային համակարգ մուտքագրել եմ 2024 թվականի տարեկան նախահաշիվները և ժամանակացույցերը՝ ըստ բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման: Ներկայացված բյուջետային ֆինանսավորման հայտ – պահանջագրի հիման վրա կատարել եմ աշխատավարձերի, պարգևատրումների, ներքին գործուղումների, պարեկի և քրեական ոստիկանության վերապատրաստման դասընթացին մասնակցելու ներքին գործուղումների փոխհատուցումները, քաղաքում պաշտոնական փոխադրումների փոխհատուցումների, չօգտագործված արձակուրդի, դրամական օգնության, արձակուրդային վճարների, կատարողական թերթիկների, դրոշմանիշային, սոցիալական և եկամտահարկի վճարները:
5. Կատարել եմ աշխատավարձի անհատական քարտերի թղթային և էլեկտրոնային եղանակով հաշվապահական հաշվառման աշխատանքները, տրամադրել եմ տեղեկանքներ համաձայն ներկայացված զեկուցագրի / կամ դիմումի/ հաշվարկված աշխատավարձի և դրան հավասարեցված այլ վճարումների, եկամտահարկի վերաբերյալ: Ծառայողական տեղափոխումների և [illegible]

6. ՀՀ ՊԵԿ-ի էլեկտրոնային համակարգով սահմանված ժամկետներում ներկայացրել եմ եկամտահարկի և սոցիալական վճարի վերաբերյալ հաշվետվություններ, հարկ վճարողի գրանցման հայտեր:
7. Վարել եմ լիազորագրերի հաշվառման մատյան, որի միջոցով կարգավորվում է բաժնի աշխատանքները կազմակերպելու համար անհրաժեշտ տնտեսական և այլ պարագաների ստացումը ՀՀ ՆԳՆ տնտեսական վարչությունից:
8. Կազմել եմ 2024 թվականի տարեկան հաշվապահակն հաշվեկշիռը, որը ներկայացրել եմ ՀՀ ՆԳՆ Ֆինանսաբյուջետային վարչություն:
9. Mulberry համակարգով ՀՀ ՆԳՆ Ֆինանսաբյուջետային վարչության կողմից ստացված հանձնարականները, շրջաբերականների պահանջները, հրամանները, ցուցումներիը, նորմատիվ իրավական ակտերի փոփոխությունները ընդունվել է ի գիտություն և կատարվել է ճշգրիտ սահմանված ժամկետում:

ՀՀ ՆԳՆ ֆինասաբյուջետային վարչության փորձագետ՝ Գայանե Սահակյան

<<28>> դեկտեմբերի 2024 թիվ

Հաշվետու ժամանակահատվածում կատարված աշխատանքները

գնահատում եմ

ՀՀ ՆԳՆ ֆինանսաբյուջետային վարչության պետ Վարդան Պետրոսյան

<<30>> դեկտեմբերի 2024 թիվ